ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
YEREVAN STATE UNIVERSITY

ԱՐԱԲԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

JOURNAL OF ARABIC STUDIES

№ 11

ISSN 1829-4510

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
YEREVAN YSU PRESS

2019

Հրատարակվում է ԵՊՀ արևելագիտության
ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

Published by the decision of the scientific council of
the Oriental Studies Department, Yerevan State University

Խմբագրական խորհուրդ

Դավիթ Հովհաննիսյան – բ.գ.թ., պրոֆեսոր (նախագահ)
Ռուբեն Կարապետյան պ.գ.դ., պրոֆեսոր
Արշակ Փոլադյան պ.գ.դ., պրոֆեսոր
Գուրամ Չիկովանի բ.գ.դ., պրոֆեսոր (Վրաստան)
Մուշեղ Ասատրյան PhD (Կանադա)
Սոնա Տոնիկյան բ.գ.թ., դոցենտ
Հայկ Քոչարյան պ.գ.թ., դոցենտ

Editorial Board

Prof. David Hovhannisyan (editor in chief)
Prof. Ruben Karapetyan
Prof. Arshak Poladyan
Prof. Guram Chikovani (Georgia)
Mushegh Asatryan, PhD (Canada)
Dr. Sona Tonikyan
Dr. Hayk Kocharyan

Կազմին՝ Աբդ Ալլահ Մուսավիր, «Կրոնագետների ժողով», 16-րդ դ. կես. պահվում է Նելսոն-Ատկինսի արվեստի թանգարանում, Կանզաս, Միսուրի:

© Երևանի պետական համալսարան, 2019
© Yerevan State University, 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գայանե Մկրտումյան
ՍԱՍԱՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՆՎԱՃՈՒՄԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ 7-19

Համլիկ Փարեմուզյան
ԱՍԱԲԻԱՅԱՆ ԵՎ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՊՏՈՒՅՏԸ ԸՍՏ ԻԲՆ ԽԱԼԴՈՒՆԻ 20-33

Անդրանիկ Հարությունյան
ՕՍԱՆԻ ՀԱՆԳՈՒՅԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ «ԵՐԵՔ ԾՈՎԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ» 34-47

Արա Մաթևոսյան
ՍԱՌԻԴԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՏՐԱՄԱՆՖՈՐՄԱՅԻԱՆ 2006-2017ԹԹ.-ԻՆ 48-70

Արսեն Առաքելյան
ԱՐԱԲԵՐԵՆԻ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՆԱՀԴԱՅԻ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ 71-88

Թերեզա Ամրյան
ԵԶԴԻԱԿԱՆ ԿՐՈՆԱԿԱՆ ՀԻՄՆԵՐՈՒՄ ԱՍՏԾՈՒՆ ՄԵԾԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԻՐԱՌՎՈՂ ԻՐԱՆԱԿԱՆ ԵՎ ԱՐԱԲԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՊԱՏՎԱՆՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ 89-111

Մարիամ Շիպակցյան
ԱՐԱԲԱԿԱՆ ՀԻՓ ՀՈՓԸ՝ ՈՐՊԵՍ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԱՐԱԲԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹԻ ՄԱՐՄՆԱՎՈՐՈՒՄ 112-126

Մեղա Տիգրանյան
ԻՍԱՆ ԵՎ «ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆ»ԴԱՎԱՆԱՆՔԸ
ՂՈՒՐԱՆՈՒՄ ՈՒ ՍՈՒՆՆԱՅՈՒՄ 127-142

Արմինե Հակոբյան
ԱԲՈՒ ԲԱՔՐ ԱՍ-ՍՈՒԼԻՆ ԵՎ ՆՐԱ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ 143-165

Հայկ Քոչարյան
«ԻՍԼԱՄԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ 166-173

Ռուզաննա Հովհաննիսյան
ԻՍՄԱՅԻԼԱԿԱՆ ԴԱՈՒԱՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ.
ԱԴԱՊՏԱՑՈՒՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ
ԻՍՄԱՅԻԼԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 174-188

CONTENT

Gayane Mkrtumyan
THE CONQUEST OF THE SASANIAN PERSIA
IN THE MEDIEVAL MUSLIM AND
ARMENIAN HISTORIOGRAPHY 7-19

Hasmik Paremuzyan
IBN KHALDUN'S VIEW ON ASABIYYA
AND CIRCLES OF POWER 19-33

Andranik Harwutyunyan
THE CENTRAL ROLE OF OMAN
IN THE "THREE SEA SYSTEM" 34-47

Ara Matevosyan
THE TRANSFORMATION OF THE ROYAL
SAUDI FAMILY (2006-2017) 48-70

Arsen Arakelyan
THE STANDARTISATION PROCESS OF THE ARABIC
IN NAHDA PERIOD 71-88

Tereza Amryan
ON SOME EPITHETS OF GOD WITH IRANIAN AND
ARABIC ORIGIN IN YEZIDI RELIGIOUS HYMNS 89-111

Mariam Shipaktsyan
ARABIC HIP HOP AS AN INCARNATION OF THE
MEDIEVAL ARABIC POETIC TRADITION 112-126

Seda Tigranyan
PROPHET ISA AND THE CONCEPT OF THE HOLY
TRINITY IN THE QUR'AN AND SUNNAH 127-142

Armine Hakobyan
ABU BAKR AS-SULI AND HIS ERA 143-165

Hayk Kocharyan
SOME ASPECTS OF THE DEVELOPMENT OF
THE CONCEPT OF ISLAMISM 166-173

Ruzanna Hovhannisyan
ISMAILI DAWA IN THE MODERN PERIOD. APPLICATION OF
ADAPTATION OF MECHANISMS IN CONTEXT OF
TRANSFORMATION OF ISMAILI IDEAS 174-188

ՍԱՈՒԴԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՏՐԱՄԱՆՖՈՐՄԱՑԻԱՆ 2006-2017ԹԹ.-ԻՆ

Արա Մաթևոսյան
ԵՊՀ արաբագիտության ամբիոն, ասպիրանտ
էլ-փոստ՝ a.matevosyan@mfa.am

Բանալի բառեր՝ *սաուդական թագավորական ընտանիք, սուդեյրիներ, երդմնակալության խորհուրդ, թագաժառանգի փոխանորդ, Մուհամմադ բին Սալման։*

Աբդալլահ թագավորը՝ որպես սաուդական թագավորական իշխանության փոխանցման նոր համակարգի հիմնադիր

Սաուդական թագավորական ընտանիքում[1] արքայազների ամենազդեցիկ ճյուղը Սաուդյան Արաբիայի Թագավորության հիմնադիր Աբդ Ալ-Ազիզ բին Աբդ Ալ-Ռահման Ալ-Ֆեյսալ Ալ Սաուդի (1875-1953թթ.) որդիների Սուդեյրիական ճյուղն է, որը սերում է վերջինիս կանանցից արքայադուստր Հիսսա բինթ Ահմադ Ալ Սուդեյրիից: Սուդեյրիական ճյուղի ներկայացուցիչները, որոնց հաճախ անվանում են սուդեյրի եղբայրներ, 7-ն են՝ նախկին Ֆահդ (1982-2005թթ.) ու ներկայիս Սալման (2015թ. ցայսօր) թագավորները և Սուլտան (1925-2011թթ.), Ահմադ (1942թ. ցայսօր), Թուրքի (1934-2016թթ.), Նայեֆ (1934-2012թթ.) և Աբդ Ալ-Ռահման (1931-2017թթ.) արքայազները: Հարկ է նշել, որ Աբդ Ալ-Ազիզի որդիների թիվը հասնում է 36-ի: Իսկ

[1] Սաուդյան Արաբիայի կառավարող ընտանքի ունեցած հարստությունը կազմում է 1,4 տրլն դոլար
مفاجأة... شبكة أمريكية تكشف حجم الثروة الحقيقي لـ"آل سعود"، Sputnik العربي، 19.08.2018، https://bit.ly/2vVkr7V

ինչ վերաբերում է նրա թոռներին, ապա Ալ Սաուդ ընտանիքից հաշվվում է ավելի քան 5000-ից մինչև 15000 արքայազն, որոնցից ոմանք նույնիսկ տարիքով ավելի մեծ են, քան Աբդ Ալ-Ազիզի ամենափոքր որդին: Սակայն Ալ Սաուդ ընտանիքի ամենաակտիվները և ամենազդեցիկ անդամները 34-ն են, որոնք կազմում են երդմնակալության խորհուրդը[2]:

Բացարձակ միապետական կառավարման ցանկացած համակարգում, որտեղ ամբողջական իշխանության կրողը միապետն է, Սաուդյան Արաբիայում նույնպես իշխանության համար պայքարը հարթ չի ընթացել: Այն հիմնականում արտահայտվել է թագավորության հիմնադիր Աբդ Ալ-Ազիզ Ալ Սաուդի որդիների շրջանում հարազատ և խորթ եղբայրների միջև պայքարի ձևաչափով, որը հատկապես ցայտուն դրսևորվեց Աբդալլահ թագավորի գահ բարձրանալուց մի քանի տարի անց: Այսպես, մինչև 2006թ.-ը համաձայն Սաուդյան Արաբիայի կառավարման համակարգին վերաբերող հիմնական կանոնադրության 5-րդ հոդվածի՝ Սաուդյան Արաբիան թագավորական միապետություն էր, որտեղ իշխանությունը պատկանում էր թագավորության հիմնադիր Աբդ Ալ-Ազիզ Ալ Սաուդի որդիներին և որդիների որդիներին, և որոնցից ամենաբարեպաշտին հավատարմության երդում էին տալիս[3]: Թագավորն էր ընտրում թագաժառանգին և թագավորական հրամանագրով ազատում էր նրան իր զբաղեցրած պաշտոնից: Թագավորի մահվան պարագայում թագաժառանգը ստանձնում էր թագավորի լիազորությունները մինչև նրան հավատարմության

[2] شجرة العائلة المالكة السعودية، وكالة أناضول، 05.11.2018، https://bit.ly/2JF8zN7
Սաուդյան Արաբիայում թագավորի և թագաժառանգի ընտրությունն իրականացնող մարմին

[3] دستور المملكة العربية السعودية، https://www.refworld.org/cgi-bin/texis/vtx/rwmain/opendocpdf.pdf?reldoc=y&docid=54295e7a4

երդում տալը[4]: Այս կարգը կիրառվել է Սաուդյան Արաբիայի Սաուդ (1953-1964թթ.), Ֆեյսալ (1964-1975թթ.), Խալեդ (1975-1982թթ.), Ֆահդ (1982-2005թթ.) և Աբդալլահ (2005-2015թթ.) թագավորների թագադրման ժամանակ:

Իրավիճակը, սակայն, փոխվեց, երբ 2006թ. հոկտեմբերի 19-ին Սաուդյան Արաբիայի թագավոր Աբդալլահ բին Աբդ Ալ-Ազիզ Ալ Սաուդը թագավորական իշխանությունը անցնցում փոխանցելու, թագավորական ընտանիքի ներսում համերաշխության մթնոլորտը չխախտելու, սաուդական կառավարող ընտանիքի միասնությունը պահպանելու և սաուդական թագավորական ընտանիքում իր դիրքերն ամրապնդելու նպատակով թագավորական հրամանագիր արձակեց երդմնակալության խորհրդի ստեղծման վերաբերյալ[5]: Թագավորական հրամանագիրը վերաբերում էր Սաուդյան Արաբիայի կառավարմանը վերաբերող հիմնական կանոնադրության 5-րդ հոդվածի փոփոխմանը:

Արդեն նշվեց, որ նախկինում թագավորն էր ընտրում թագաժառանգին և թագավորական հրամանագրով ազատում նրան իր զբաղեցրած պաշտոնից: Սակայն երդմնակալության խորհրդի կանոնադրության հաստատմամբ փոփոխության ենթարկվեց վերոնշյալ դրույթը, ըստ որի՝ «կոչ էր արվում հավատարմության երդում տալ թագավորին և ընտրել թագաժառանգին համաձայն երդմնակալության խորհրդի կանոնադրության»[6]:

Հարկ է ընդգծել, որ վերոնշյալ կանոնադրությունը իրավունք էր վերապահում Սաուդյան Արաբիայի թագավորի և թագաժառանգի ընտրության գործընթացում ներգրավել

[4] دستور الملكة العربية السعودية، https://www.refworld.org/cgi-bin/texis/vtx/rwmain/opendocpdf.pdf?reldoc=y&docid=54295e7a4

[5] نظام هيئة البيعة للمملكة العربية السعودية، https://nshr.org.sa/wp-content/uploads/2013/08/329_PDF.pdf

[6] ماذا تعرف عن "هيئة البيعة" السعودية؟، وكالة أناضول، 07.11.2018، https://bit.ly/2JKlXjb

թագավորական ընտանիքի բոլոր ճյուղերի ներկայացուցիչներին՝ Սաուդյան Արաբիայի հիմնադիր Աբդ Ալ-Ազիզ թագավորի որդիներին, նրա մահացած, պաշտոնանկ արված և բժշկական քննության արդյունքում տկար ճանաչված որդիների որդիներից մեկին, որին նշանակում է թագավորը, և թագավորի ու թագաժառանգի որդիներից մեկական որդի, որոնց ևս նշանակում է թագավորը[7]:

Երդմնակալության խորհուրդի անդամների թիվը 34 է[8], որը ներառում է Աբդ Ալ-Ազիզ թագավորի բոլոր որդիներին կամ նրանց ժառանգներին: Խորհուրդը ղեկավարում է Աբդ Ալ-Ազիզ թագավորի տարիքով ամենամեծ որդին, որին հաջորդում է նրանից տարիքով ավելի փոքրը: Նրանցից երկուսի բացակայության դեպքում խորհուրդը ղեկավարում է Աբդ Ալ-Ազիզի որդիների որդիներից տարիքով ամենամեծը[9]:

Թագավորը հավատարմության երդումը ստանալուց և երդմնակալության խորհրդի հետ խորհրդակցելուց հետո ընտրում է մեկ, երկու կամ երեք թեկնածու, որոնց դիտարկում է որպես թագաժառանգ և ներկայացնում է երդմնակալության խորհրդին: Վերջինս պետք է ջանքեր գործադրի՝ ընդհանուր համաձայնությամբ ընտրված թեկնածուներից մեկին՝ որպես թագաժառանգ ներկայացնելու համար: Եթե երդմնակալության խորհուրդը չի ներկայացնում ընտրված թեկնածուներից ոչ մեկի

[7] نظام هيئة البيعة للمملكة العربية السعودية، https://nshr.org.sa/wp-content/uploads/2013/08/329_PDF.pdf

[8] Աբդ Ալ-Ազիզ թագավորը ունեցել է 36 որդի: Նրանցից արքայազն Ֆաուազը մահացել է առանց երեխա ունենալու, իսկ արքայազն Համուդը չի ունեցել տղա զավակ: Դա է պատճառը, որ երդմնակալության խորհրդի կազմը բաղկացած է 34 հոգուց:

[9] نظام هيئة البيعة للمملكة العربية السعودية، https://nshr.org.sa/wp-content/uploads/2013/08/329_PDF.pdf

թեկնածությունը, ապա պետք է ներկայացնի մեկ ուրիշին՝ որպես թագաժառանգ[10]:

Թագավորը ցանկացած ժամանակ կարող է պահանջել երդմնակալության խորհրդից ներկայացնելու գահի հավակնորդներ: Եթե թագավորը հավանություն չի տալիս ներկայացված թեկնածուին կամ թեկնածուներին, ապա երդմնակալաության խորհուրդը պետք է քվեարկի նրանց օգտին, ում թեկնածությունն առաջադրել է, և ամենաշատ ձայներ հավաքած թեկնածուն ընտրվում է թագաժառանգ[11]:

Թագաժառանգի ընտրությունը կատարվում է թագավորին հավատարմության երդում տալուց հետո ոչ ուշ, քան երեսուն օրվա ընթացքում[12]:

Հարկ է նշել, որ երդմնակալության խորհուրդը ոչ մի լիազորություն չունի փոխելու կառավարման հիմնական կարգը, երդմնակալության խորհրդի կանոնադրությունը, Նախարարների խորհրդի կարգը և լուծարելու այն, Խորհրդակցական խորհրդի (Շուրա) կարգը, Ազգային անվտանգության խորհրդի կարգը կամ կառավարման համակարգին վերաբերող որևէ այլ կարգ[13]:

Թագավորի և թագաժառանգի միաժամանկյա ծանր հիվանդության, որը նրանց հնարավորություն չի տալիս իրականացնել իրենց իշխանությունը և մահվան դեպքում երդմնակալության խորհուրդը ոչ ավելի, քան յոթ օրվա ընթացքում թագավորության հիմնադրի որդիներից կամ վերջիններիս որդիներից ընտրում է թագավոր: Իսկ նախքան թագավորին հավատարմության երդում տալը թագավորության գործերի

[10] نظام هيئة البيعة للمملكة العربية السعودية، https://nshr.org.sa/wp-content/uploads/2013/08/329_PDF.pdf

[11] Նույն տեղում

[12] Նույն տեղում

[13] Նույն տեղում

կառավարումն իրականացնում է Կառավարման ժամանակավոր խորհուրդը[14]:

Երդմնակալության խորհրդի անդամների նվազագույնը երկու երրորդի, այդ թվում՝ խորհրդի նախագահի կամ նրա փոխանորդի ներկայության դեպքում նիստը համարվում է լիագումար, իսկ որոշումներն ընդունվում են ներկա անդամների ձայների մեծամասնությամբ[15]:

Երդմնակալության խորհրդի կանոնադրության դրույթները ենթակա են փոփոխման թագավորական հրամանագրով և երդմնակալության խորհրդի համաձայնությամբ[16]:

Դատելով նորաստեղծ մարմնի կանոնադրությունից՝ հարկ է նշել, որ վերջինս Սաուդյան Արաբիայում թագավորական իշխանության՝ մեկ սերնդից մյուսին փոխանցման տեսանկյունից աննախադեպ էր: Այն նախևառաջ «խախտում» էր Աբդ Ալ-Ազիզ թագավորի որդիների կամ նրանց որդիների միջև իշխանության փոխանցման նախկին ավանդույթը՝ թողնելով թագաժառանգի ընտրության հարցը երդմնակալության մարմնի անդամների մեծամասնության համաձայնությանը:

Սա իր հերթին ապահովում էր թագաժառանգի ընտրության հարցում թագավորական ընտանիքի բոլոր ճյուղերի անդամների մասնակցությունը և դրանով միաժամանակ հնարավորություն էր տալիս թագավորին այդ մարմինը դիտարկել որպես հնարավոր հենարան ավելի ազդեցիկ ճյուղի հետ ներիշխանական պայքարում (ինչպիսիք էին սուդեյրիները) աջակցություն ստանալու նպատակով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սուդեյրի եղբայրները յոթն էին՝ մարմնի մյուս 24 անդամների միջև մանևրելը ավելի հեշտ էր, քան միայնակ պայքարը նրանց դեմ:

[14] نظام هيئة البيعة للمملكة العربية السعودية، https://nshr.org.sa/wp-content/uploads/2013/08/329_PDF.pdf

[15] Նույն տեղում

[16] Նույն տեղում

Ակնհայտ էր, որ նոր ընդունված կանոնադրությունը իրենից ներկայացնում էր ներընտանեկան իշխանական պայքարի արդյունքում ընդունված փաստաթուղթ, որի հիմնական նպատակը նաև թագավորական ընտանիքի շրջանակներում իշխանության բացարձակ կենտրոնացումն էր Աբդ Ալ-Ազիզ թագավորից սերող անմիջական սերունդներից որևէ մեկի ձեռքում: Սրա լավագույն վկայությունը թերևս այն էր, որ վերոնշյալ կանոնադրության դրույթները համաձայն թագավորական հրամանագրի՝ չէին տարածվելու այդ ժամակվա թագավոր Աբդալլահի և այդ ժամանակվա թագաժառանգի վրա: Դա նրան գործողությունների լիակատար ազատություն էր տալիս՝ այս կամ այն կերպ թագավորական ընտանիքի ներսում իր ուժերը վերադասավորելու և ավելի ամուր դիրքերից հանդես գալու համար՝ ունենալով իր կողմից նշանակված երդմնակալության մարմնի ղեկավար:

Հարկ է նշել, որ երդմնակալության խորհուրդն իր ձևավորումից ի վեր թագավորական ընտանիքի ներսում ականատես է եղել սուր հակասությունների և պառակտումների: Այսպես, արքայազն Տալալ բին Աբդ Ալ-Ազիզն առարկել էր Նայեֆ բին Աբդ Ալ-Ազիզի՝ որպես նախարարների խորհրդի նախագահի երկրորդ տեղակալի նշանակմանը առանց երդմնակալության խորհրդի հետ խորհրդակցելու և իր հրաժարականն էր ներկայացրել՝ դուրս գալով երդմնակալության խորհրդից[17]: Իսկ Նայեֆ բին Աբդ Ալ-Ազիզի՝ արդեն թագաժառանգ ընտրվելու ժամանակ վերջինիցս տարիքով ավելի մեծ արքայազները նույնպես առարկել էին նրա նշանակմանը[18]: Հակասություններն ավելի սրվեցին, երբ Նայեֆի մահվանից հետո Մուկրին բին Աբդ

[17] طلال يستقيل من هيئة البيعة، الجزيرة، 16.1.2011، https://bit.ly/2w6B8gE

[18] سابقة سعودية تاريخية: هيئة البيعة تصوّت على العزل أيضاً، العربي الجديد، 2017.11.21، https://bit.ly/2QcesVl

Ալ-Ազիզը նշանակվեց թագաժառանգի փոխանորդ առանց երդմնակալության խորհրդի հետ խորհրդակցության, ինչը խորհրդի մի շարք անդամներ դիտարկում էին նպաստավոր ճանապարհ՝ Մութաբ բին Աբդալլահի իշխանության հասնելու համար[19]:

Թագաժառանգ Սուլտան բին Աբդ Ալ-Ազիզի մահվանից հետո Աբդալլահ թագավորը, առաջին անգամ հենվելով նոր ձևավորված երդմնակալության խորհրդի կանոնադրության վրա, 2011թ. հոկտեմբերի 27-ին Նայեֆ բին Աբդ Ալ-Ազիզին նշանակեց թագաժառանգ և նախարարների խորհրդի նախագահ: Վերջինիս ձեռքում մնաց ներքին գործերի նախարարի պորտֆելը[20]:

2012թ. հունիսին Ժնևում թագաժառանգ Նայեֆի մահվանից հետո[21] Աբդալլահ թագավորը Սալման բին Աբդ Ալ-Ազիզին նշանակեց Սաուդյան Արաբիայի թագաժառանգ, ինչպես նաև նախարարների խորհրդի փոխնախագահ և պաշտպանության նախարար[22]:

Երբ հայացք ենք գցում Աբդալլահ թագավորի կառավարման ընթացքում թագաժառանգների ընտրությանը, ապա տեսնում ենք, որ թե՛ Սուլտան, թե՛ Նայեֆ և թե՛ Սալման թագաժառանգները բոլորը սուդեյրի յոթ եղբայրներից երեքն են: Սա գալիս է փաստելու, որ թեև Աբդալլահ թագավորի ունեցած բացարձակ իշխանությանը, թագավորական ընտանիքի ներսում ազդեցիկ խմբավորումների դեմ պայքարում նա ստիպված էր հաշվի նստել վերջիններիս հետ և հավասարակշռեր թագավորության կառավարման համակարգում ուժերի դասավորությունը՝ նրանց նշանակելով

[19] Նույն տեղում

[20] الملك عبد الله يعين الأمير نايف بن عبد العزيز وليا للعهد، France 24، 28.10.2011 https://www.france 24.com/ar/20111028-saudi-arabia-king-abdallah-names-nayef-crown-prince

[21] وفاة ولي العهد السعودي، الجزيرة، 16.6.2012، https://bit.ly/2W4V7Lj

[22] تعيين الأمير سلمان بن عبد العزيز وليا للعهد في السعودية،France 24 ، 18.06.2012 https://bit.ly/2HLjxAn

երկրի կառավարման համակարգի ամենաբարձր պաշտոններում և թագաժառանգից բացի նրանց իշխանության տակ դնելով պաշտպանության, ներքին գործերի նախարարի, նախարարների խորհրդի փոխնախագահի և այլ պաշտոնները՝ դրանով մեղմացնելով նրանց՝ իշխանության նկատմամբ ունեցած հավակնոտ ծրագրերն ու արգելակելով կառավարման ղեկին անհապաղ հասնելուն ուղղված նրանց նկրտումները:

Սա, սակայն, ամենևին էլ չէր նշանակում, որ Աբդալլահ թագավորը պատրաստվում էր իրենից հետո իշխանությունը հանգիստ ու անցնցում փոխանցել սուդեյրի եղբայրներին. նրա որդի Մութաբ բին Աբդալլահը սկսել էր մեծ ազդեցություն ձեռք բերել, իր հոր կառավարման տարիներին հմտացել էր ռազմական գործում և ստանալով նրա աջակցությունը՝ դարձել նախարարների խորհրդի անդամ և պետնախարար, Ազգային գվարդիայի ղեկավար, իսկ արդեն 2013թ. Ազգային գվարդիայի՝ որպես նախարարություն վերաձևավորվելուց[23] հետո նշանակվել էր նախարար[24]: Հենց Մութաբ բին Աբդալլահին էլ Աբդալլահ թագավորը տեսնում էր Սաուդյան Արաբիայի Թագավորության գահի ապագա հավակնորդ: Բայց քանի որ թագավորության հիմնադիր Աբդ Ալ-Ազիզի որդիներից ոմանք դեռևս ողջ էին, Աբդալլահ թագավորը չէր կարող գնալ թագավորական ընտանիքի ներսում ազդեցիկ խմբավորումների կողմից դժգոհություն

[23] Ազգային գվարդիայի դերի ճիշտ գնահատման համար անհրաժեշտ ենք համարում նշել, որ այն կազմում է Սաուդյան Արաբիայի զինված ուժերի անբաժանելի մասը, որի առաքելությունն է աջակցել Սաուդյան Արաբիայի Թագավորության սահմանների պաշտպանությանը, ներքին կայունության ու անվտանգության պահպանմանը, կարևոր ռազմավարական ու կենսական հաստատությունների պաշտպանությանը և այլն: Այն կարող է իրականացնել դժվարին առաքելություններ՝ այդ թվում և պատերազմական՝ հանդես գալով որպես զուգահեռ բանակ Սաուդյան Արաբիայի զինված ուժերին:

مهمة وواجبات وزارة الحرس الوطني، الموقع الرسمي لوزارة الحرس الثوري، https://sang.gov.sa/GeneralInfo/Pages/TaskOfNationalGuard.aspx

[24] من هو الأمير متعب بن عبد الله؟، الجزيرة، https://bit.ly/30Goh2O

հրահրելու ճանապարհով իր որդուն պետության ամենաբարձր պաշտոններից մեկին նշանակելու քայլին:

Թագավորական ընտանիքի ներսում համերաշխության մթնոլորտը պահպանելու, ավելորդ լարվածության առիթ չտալու և միաժամանակ Մութաբ բին Աբդալլահի դիրքերը թագավորական ընտանիքում ամրապնդելու նպատակով 2014թ. մարտին սաուդական թագավորական ընտանիքում իշխանության փոխանցման համակարգում Աբդալլահ թագավորը նորամուծություն մտցրեց՝ թագավորական հրամանագրով սահմանելով թագաժառանգի փոխանորդի պաշտոնը: Սա Սաուդյան Արաբիայի Թագավորության կառավարման համակարգի և իշխանության փոխանցման տեսանկյունից աննախադեպ երևույթ էր: Մուկրին բին Աբդ Ալ-Ազիզ Ալ-Սաուդը, ով Աբդալլահ թագավորի խորթ եղբայրն էր, դարձավ առաջինը, ով ստանձնեց թագաժառանգի փոխանորդի պաշտոնը[25]:

Ըստ Աբդալլահ թագավորի արձակած հրամանագրի՝ «չէր կարելի որևէ դեպքում որևէ կերպով, որևէ պատճառաբանությամբ և որևէ մեկնաբանմամբ փոխել կամ փոխարինել թագաժառանգի փոխանորդին... Իսկ եթե ապագա թագավորը ցանկանար ընտրել թագաժառանգի փոխանորդ, ապա նա պետք է երդմնակալության խորհրդին ներկայացներ թեկնածու և խորհրդի անդամների մեծամասնության համաձայնությունից հետո արձակեր թագավորական հրամանագիր թագաժառանգի փոխանորդի ընտրության վերաբերյալ»[26]:

Մուկրին բին Աբդ Ալ-Ազիզին նշանակելով որպես թագաժառանգի փոխանորդ և սահմանելով նրան չփոխարինելու դրույթը՝ Աբդալլահ թագավորը շեշտը դնում էր թագավորության

[25] السعودية: تعيين الأمير مقرن بن عبدالعزيز وليا لولي العهد، 27.03. 2014، البيان، https://www.albayan.ae/one-world/arabs/2014-03-27-1.2089657

[26] السعودية: تعيين الأمير مقرن بن عبدالعزيز وليا لولي العهد، 27.03. 2014، البيان، https://www.albayan.ae/one-world/arabs/2014-03-27-1.2089657

կառավարման համակարգում սուդեյրի ազդեցիկ արքայազներից դեպի վերջիններիս խորթ եղբայրների իշխանական թևին պետության կառավարման փոխանցման անհրաժեշտության վրա՝ դրանով դյուրացնելով Մութաբ բին Աբդալլահի ճանապարհը դեպի կառավարման ղեկ:

2015թ. հունվարին Աբդալլահ թագավորի մահը վերջ դրեց սաուդական թագավորական ընտանիքի ներսում իշխանության փոխանցման համակարգային փոփոխությունների առաջին փուլին:

Այսպիսով՝ Աբդալլահ թագավորի իշխանության տարիները աչքի ընկան թագավորական կառավարման համակարգի՝ իշխանության փոխանցմանն ուղղված մի շարք փոփոխություններով, որոնք, ինքին, աննախադեպ էին Սաուդյան Արաբիայի Թագավորության ամբողջ պատմության մեջ: Նախաձեռնելով Աբդ Ալ-Ազիզի որդիների և նրանց որդիների՝ թագավորական իշխանության փոխանցման գործում ունեցած անմիջական մասնակցությունը՝ Աբդալլահ թագավորը ձեռնամուխ եղավ թագավորական ընտանիքի ավելի ազդեցիկ խմբավորումների դեմ իշխանության համար մղվող պայքարում ուժերի հավասարակշռմանն ու վերադասավորմանը: Իսկ կառավարման օղակներում նրա մտցրած նորամուծությունը նպատակ ուներ իրենից հետո Սաուդյան Արաբիայի կառավարման համակարգի ամենավերին օղակում տեսնելու իր ժառանգներին և ուղղելու իշխանության փոխանցման ուղին ազդեցիկ խորթ եղբայրներից դեպի թագավորական ընտանիքի մյուս խմբավորմանը:

Մուհամմադ բին Սալմանը՝ որպես Սաուդյան Արաբիայի թագաժառանգ

Աբդալլահ թագավորի մահը և Սալման բին Աբդ Ալ-Ազիզ Ալ Սաուդի իշխանության գալը մոտեցրեց սաուդական

թագավորական դինաստիայի՝ թագավորության հիմնադրի որդիներից որդիներին իշխանության փոխանցման տրանսֆորմացիայի ավարտը: Սաուդյան Արաբիայի նոր թագավորը սկսեց հակադրվել Աբդալլահ թագավորի իշխանական ճյուղին, ինչը փայլուն դրսևորվեց 2015թ. ապրիլին, երբ Սալման թագավորը թագավորական հրամանագրով Մուկրին բին Աբդ Ալ-Ազիզ Ալ-Սաուդին ազատեց թագաժառանգի պաշտոնից՝ «հիմնվելով վերջինիս պահանջի վրա» և նրա փոխարեն թագաժառանգ նշանակեց Մուհամմադ բին Նայեֆին, իսկ Մուհամմադ բին Սալմանին՝ թագաժառանգի փոխանորդ[27]:

Այսպիսով, Մուհամմադ բին Նայեֆը դարձավ Աբդ Ալ-Ազիզ թագավորի առաջին թոռը, ով ստանձնեց թագաժառանգի պաշտոնը, իսկ Մուհամմադ բին Սալմանը՝ ամենափոքրը և երկրորդը, ով ստանձնեց թագաժառանգի փոխանորդի պաշտոնը: Աբդ Ալ-Ազիզ թագավորից սերող երկրորդ սերնդի արքայազները պաշտոնապես հայտնվեցին իշխանության բուրգի գագաթին՝ դրանով դնելով գահաժառանգության նոր ուղու սկիզբը Սաուդյան Արաբիայում և սահմանեցին սուդեյրիների բացարձակ իշխանությունը պետության կառավարման ամենաբարձր օղակներում:

Բացի իշխանության բարձր օղակներում իրականացրած պաշտոնների փոփոխությունից, Սալման թագավորը գնաց բացառիկ քայլի և երկրորդ անգամ[28] Սաուդյան Արաբիայի պատմության մեջ Սաուդյան Արաբիայի արտաքին գործերի նախարար նշանակեց Ալ Սաուդ ընտանիքից չսերող ԱՄՆ-ում Սաուդյան Արաբիայի դեսպան Ադիլ Ալ-Ջուբեյրին[29]:

[27] محمد بن نايف وليا للعهد بالسعودية وإعفاء الأمير مقرن، الجزيرة، 29.4.2015، https://bit.ly/2JPenpp

[28] Ալ Սաուդ ընտանիքից չսերող Սաուդյան Արաբիայի արտաքին գործերի առաջին նախարարը եղել է Իբրահիմ Ալ-Սուեյլը, ով այդ պաշտոնին է նշանակվել 1961թ.:

[29] عادل الجبير، الجزيرة، https://bit.ly/2YyLLF4

Սալման թագավորի՝ կառավարման համակարգում իրականացրած փոփոխությունները միտված էին վերափոխել պետության դեմքը, վերջինիս կառավարման մեջ ներդնել երիտասարդական տարրը և իշխանությունը փոխանցել երկրորդ սերնդին: Գրեթե ակնհայտ էր, թե ով էր առաջնորդելու Սաուդյան Արաբիան գալիք տասնամյակներում:

Սաուդյան Արաբիայի նոր թագաժառանգն ու թագաժառանգի փոխանորդը թեև սերում էին սուդեյրիների ազդեցիկ թագավորական նույն ճյուղից և թվում էր, թե նրանց միջև առերևույթ իշխանության պայքար որպես այդպիսին չէր կարող լինել, սակայն հենց սկզբից էլ սկսեցին իրենց ազդեցությունն ընդլայնել Սաուդյան Արաբիայի սահմաններում և դրանից դուրս:

Մուհամմադ բին Սալմանի, որը Սաուդ թագավորի անվան Ռիյադի համալսարանի իրավագիտության և քաղաքական գիտությունների ֆակուլտետի բակալավրիատի շրջանավարտ էր (ի դեպ դինաստիայի հիմանդրի թոռների մեծամասնությունը ամերիկյան համալսարանների շրջանավարտներ են), Սաուդյան Արաբիայի ներսում ազդեցության ընդլայնմանը նպաստեց այն հանգամանքը, որ նա ստանձնեց մի շարք առանցքային նշանակության պաշտոններ, ինչպիսիք էին “Aramco”-ի կառավարման խորհրդի նախագահի, պաշտպանության նախարարի, թագավորի գրասենյակի ղեկավարի, Տնտեսական հարցերի և զարգացման խորհրդի նախագահի և նախարարների խորհրդի երկրորդ փոխնախագահի պաշտոնները[30], ինչպես նաև գլխավորեց «Վճռականության փոթորիկ» ռազմական գործողությունը Եմենում հութիների դեմ պայքարում Իրանի ազդեցությունը չեզոքացնելու նպատակով[31]:

[30] صاحب السمو الملكي الأمير محمد بن سلمان بن عبد العزيز آل سعود، الموقع الرسمي لوزارة الدفاع، https://www.mod.gov.sa/Leaders/Minister/Pages/CV.aspx

[31] الملك سلمان يطلق عملية "عاصفة الحزم" ضد الحوثيين، العربية، 2015.03.26، https://bit.ly/2HL67UC

Մուհամմադ բին Նայեֆի անվան հետ էին կապվում երկրի ներքին անվտանգության հարցերը: Սա պայմանավորված էր նրանով, որ Մուհամմադ բին Նայեֆն իր կարողությունների և ձեռքբերումների շնորհիվ այս բնագավառում նշանակալի հաջողություններ էր գրանցել: Ամերիկյան հետաքննության դաշնային բյուրոյում (FBI) և բրիտանական ոստիկանության մարմիններում (Scotland Yard) ձեռք բերած հմտությունները լավագույնս օգտագործել էր ահաբեկչության դեմ պայքարում՝ կանխելով 1998թ. Ջիդդայում ամերիկյան հյուպատոսության վրա Ալ-Կաիդայի կողմից կազմակերպված հարձակումը, ինչպես նաև 2010թ. Եմենից Չիկագո մեկնող օդանավի պայթեցման փորձը: Սա առաջացրել էր ամերիկյան կառավարող շրջանակների համակրանքը նրա նկատմամբ[32]:

Երկրի ներքին անվտանգության ամբողջ իշխանության կենտրոնացումը Մուհամմադ բին Նայեֆի ձեռքում լուրջ մարտահրավեր էր Մուհամմադ բին Սալմանի համար: Մուհամմադ բին Նայեֆի ազդեցությունն ու իշխանությունը թուլացնելու համար 2017թ. ապրիլին թագավորական հրամանագրով ստեղծվեց Ազգային անվտանագության կենտրոն, որը կապված էր անմիջապես թագավորի գրասենյակի հետ և որի ղեկավարը Ազգային անվտանգության խորհրդականն էր[33]: Նորաստեղծ մարմնի ղեկավար նշանակվեց Մուհամմադ բին Սալմանի մերձավորներից Մուհամմադ Ալ-Ղուֆեյլին: Այս կառույցը փաստացի մրցակցում էր ներքին գործերի նախարարության և անվտանգության ու քաղաքական հարցերով խորհրդի հետ, որոնք գլխավորում էր Մուհամմադ բին Նայեֆը:

[32] خالد أحمد، صراع العروش في السعودية: هل حُسمت مسألة الملك القادم حقا؟، تبيان، https://tipyan.com/throne-battle-in-saudi-arabia-has-the-dilemma-of-the-next-king-really-settled

[33] ماذا يعني تأسيس مركز للأمن الوطني في السعودية؟، العربية، 2017.04.23، https://bit.ly/2Qftb1E

Բացի վերոնշյալ կառույցից, Մուհամմադ բին Նայեֆի կողմից ղեկավարվող Դատախազության և հետախուզական մարմինը անջատվեց մյուս մարմիններից և վերանվանվեց Գլխավոր դատախազություն, որն այլևս չէր ենթարկվում ներքին գործերի նախարարին, այլ անմիջականորեն դրվեց թագավորի հսկողության տակ[34]:

Սակայն գործը սրանով չսահմանափակվեց: Մուհամմադ բին Սալմանի մերձավորներից գնդապետ Ահմադ Ալ-Ասիրին նշանակվեց Սաուդյան Արաբիայի գլխավոր հետախուզության պետի տեղակալ[35]՝ դրանով գրեթե ամբողջությամբ վերահսկելի դարձնելով ներքին և արտաքին անվտանգության համակարգը

Այսպիսով, անվտանգության ու հետախուզության նոր մարմինների ստեղծումը, որոնք անմիջապես դրվեցին թագավորի ենթակայության տակ և դուրս պահվեցին ներքին գործերի նախարարության վերահսկողությունից և որոնց ղեկավար պաշտոններում նշանակվեցին Մուհամմադ բին Սալմանի մերձավորները, նպատակ էր հետապնդում լուսանցքում թողնել Մուհամմադ բին Նայեֆին Սաուդյան Արաբիայում ունեցած իր ազդեցությամբ ու հեղինակությամբ: Սա սաուդական ներքին լսարանում Մուհամմադ բին Նայեֆի աճող հեղինակությանը հարվածելու տեսանկյունից մշակված ու ծրագրված ռազմավարություն էր:

Ամերիկյան կառավարող շրջանակներում, ինչպես արդեն նշվեց, Մուհամմադ բին Նայեֆի անձի շուրջ համակրանք էր ձևավորվել Սաուդյան Արաբիայում Ալ-Կաիդայի դեմ վերջինիս մղած կոշտ պայքարի արդյունքում: Մուհամմադ բին Նայեֆի ճանապարհը կտրելու, Մուհամմադ բին Սալմանի

[34] مرسوم سعودي يلحق هيئة الادعاء بالملك، الجزيرة، 17.6.2017، https://bit.ly/2M0tfny

[35] العاهل السعودي يعين اللواء أحمد عسيري نائبا لرئيس الاستخبارات، روسيا اليوم، https://bit.ly/2WVUG2O، 22.04.2017

հեղինակությունն ամերիկացիների շրջանում բարձրացնելու և ամերիկյան վարչակարգի հետ անմիջական կապ ապահովելու նպատակով վերջինիս կրտսեր եղբայր Խալեդ բին Սալմանը նշանակվեց ԱՄՆ-ում Սաուդյան Արաբիայի դեսպան[36]:

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի կողմից նախագահի պաշտոնը ստանձնելուց հետո 2017թ. մարտին Մուհամմադ բին Սալմանը այցելեց ԱՄՆ: Այցը նպատակ ուներ վերանայելու ԱՄՆ-ի հետ հարաբերությունները, որոնք սրվել էին Բարաք Օբամայի կառավարման տարիներին[37]: Բացի այցի հայտարարված նպատակից Մուհամմադ բին Սալմանի համար այցը նպատակաուղղված էր ամրապնդել իր դիրքերն ամերիկյան կառավարող շրջանակներում և անմիջական կապ հաստատել վերջինիս ղեկավարների հետ: Իսկ Թրամփի համար այցը կարևորվում էր Սաուդյան Արաբիայի հետ միլիարդավոր դոլարների գործարքներ նախաձեռնելու և ամերիկյան տնտեսության մեջ սաուդական ներդրումներ ներգրավելու տեսանկյունից, որը նրան անհրաժեշտ էր նոր աշխատատեղեր ստեղծելու և իր ժողովրդականությունը բարձրացնելու համար[38]:

Սաուդա-ամերիկյան հարաբերությունների բարելավման և Մուհամմադ բին Սալմանի դիրքերի ամրապնդման ուղղությամբ առանցքային դեր սկսեց խաղալ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի ավագ խորհրդական և փեսա Ջարեդ Քուշները: Վերջինս, որոշ աղբյուրների հավաստամամբ, առաջարկել էր Թրամփին իր օտարերկրյա առաջին այցելությունը կազմակերպել դեպի Սաուդյան Արաբիա, իսկ այնուհետև Իսրայել՝ դրանով

[36] تعيين الأمير خالد بن سلمان سفيرا للسعودية في واشنطن، سكاي نيوز عربية، 22.04.2017، https://bit.ly/2HsXKOU

[37] ترامب يلتقي ولي ولي العهد السعودي الأمير محمد بن سلمان، فرانس 24، 15.03.2017، https://bit.ly/2LYHYQ4

[38] صراع العروش في السعودية: هل حُسمت مسألة الملك القادم حقا؟ خالد أحمد - 22 يونيو، 2017 https://tipyan.com /throne-battle-in-saudi-arabia-has-the-dilemma-of-the-next-king-really-settled

մերձեցնելով սաուդա-իսրայելական հարաբերությունները՝ հաշվի առնելով Իրանի դեմ սաուդական ղեկավարության և Իսրայելի վարչապետ Բենյամին Նաթանյահուի որդեգրած ընդհանուր քաղաքական գիծը[39]:

Եվ իրոք, 2019թ. մայիսի 20-ին պատմության մեջ առաջին անգամ տեղի ունեցավ ԱՄՆ նախագահի առաջին օտարերկրյա այց դեպի իսլամական երկիր՝ Սաուդյան Արաբիա[40]: Այցի կարևորությունն ընկալելու համար բավական է նշել, որ համատեղ հետաքրքրություն ներկայացնող բնագավառներում կնքված փաստաթղթերի ընդհանուր արժեքը կազմում էր 460 մլրդ դոլար: Սա ԱՄՆ-ի պատմության մեջ զենքի ամենամեծ գործարքն էր, որից 110 մլրդ դոլարը նախորդ ռազմական գործարքների արժեքն էր, իսկ մյուս 350 մլրդ գործարքները պետք է կյանքի կոչվեին գալիք տասը տարիների ընթացքում[41]:

Մեկնաբանելով ռազմական բնագավառում նման համագործակցության աննախադեպ խորացումը՝ ԱՄՆ պետքարտուղար Թիլերսոնը հայտարարեց, որ վերոնշյալ գործարքը աջակցություն է Սաուդյան Արաբիային և Ծոցի տարածաշրջանին՝ իրանական ազդեցությանը և Սաուդյան Արաբիայի սահմանների ամբողջ երկայնքով իրանական սպառնալիքներին դիմակայելու, ինչպես նաև տարածաշրջանում ահաբեկչության դեմ պայքարի գործում[42]:

Հետաքրքրական է, որ Թրամփի այցի ամբողջ ընթացքում Մուհամմադ բին Նայեֆի՝ որպես թագաժառանգի դիրքը

[39] من كتاب "الخوف"... دور كوشنير في تنصيب ابن سلمان وليا للعهد، Sputnik العربي، 13.09.2018، https://bit.ly/30wz7Iu

[40] حصاد اليوم الأول لزيارة ترامب للسعودية: استقبال حافل وعقود بـ380 مليار دولار، فرانس 24، 20.05.2017، https://bit.ly/2JZzaqB

[41] ترمب بالسعودية.. 460 مليار دولار وثلاث قمم، الجزيرة، 2017.5.21، https://bit.ly/2Ht9b97

[42] حصاد اليوم الأول لزيارة ترامب للسعودية: استقبال حافل وعقود بـ380 مليار دولار، فرانس 24، 20.05.2017، https://bit.ly/2JZzaqB

լուսանցքում թողնվեց, իսկ վերջինս էլ գրեթե ոչ մի էական մասնակցություն չունեցավ սաուդա-ամերիկյան հարաբերությունների վերանայման գործում: Դա նրա փոխարեն համակարգում էր արդեն ամերիկյան կառավարող շրջանակներում մեծ հավանություն վայելող թագաժառանգի փոխանորդ Մուհամմադ բին Սալմանը:

Թագաժառանգի և թագաժառանգի փոխանորդի միջև հարաբերությունները սրվեցին հատկապես Կատարի շուրջ ստեղծված իրավիճակի պատճառով, երբ 2017թ. հունիսի 6-ին Սաուդյան Արաբիան, Բահրեյնը, Եգիպտոսը և Արաբական Միացյալ Էմիրությունները խզեցին դիվանագիտական հարաբերությունները Կատարի հետ[43]: Համաձայն որոշ աղբյուրների՝ Մուհամմադ բին Նայեֆը Կատարը ավելի մերձավոր էր դիտարկում Սաուդյան Արաբիայի համար, քան Արաբական Միացյալ Էմիրությունները և հետևաբար մերժում էր Կատարի շրջափակումը՝ դրանով ամբողջությամբ հակադրվելով թագաժառանգի փոխանորդ Մուհամմադ բին Սալմանի թիմին և վերջինիս որդեգրած քաղաքական ուղուն[44]:

Հարաբերությունները, որոնք կապում էին Մուհամմադ բին Նայեֆին և Կատարին, բնական է, պետք է առաջացնեին թագավորական գրասենյակի զայրույթը՝ միաժամանակ քաղաքական օրակարգի առաջին պլան մղելով նրան իշխանությունից հեռացնելու հարցը: Մուհամմադ բին Սալմանը քաջ գիտակցում էր, որ թագավորական իշխանությունն իր ձեռքում կենտրոնացնելը պահանջում էր վերջ դնել կատարական որևէ ազդեցության ու համակրանքի տեղական և տարածաշրջանային մակարդակներում, որպեսզի թագավորությունը Մուհամմադ բին

[43] قطع العلاقات مع قطر.. أي مستقبل لمجلس التعاون؟، الجزيرة، 06.06.2017، https://bit.ly/2WfDzvP

[44] قراءة في الانقلاب الناعم داخل السعودية: الملك الليبرالي ابن سلمان في الطريق إلى العرش، نون بوست، https://www.noonpost.com/content/185352017.21.11

Նայեֆին տապալելուց հետո չբախվեր լուրջ ընդդիմության: Այդ պատճառով էլ Կատարի շուրջ ստեղծված իրավիճակն օգտագործելով՝ Մուհամմադ բին Սալմանը փորձում էր լուծում տալ մի շարք տարածաշրջանային և ներքին հարցերի:

Թրամփի՝ Սաուդյան Արաբիա կատարած այցից և Կատարի հետ դիվանագիտական հարաբերությունները խզելուց հետո սկսվեցին լուրեր շրջանառվել առ այն, որ Մուհամմադ բին Նայեֆը առողջական լուրջ խնդիրներ ունի, որոնք ձեռք էր բերել 2009թ. իր դեմ կազմակերպված անհաջող մահափորձից հետո, որի հետևանքով ընկել էր դեղամիջոցներից կախվածության մեջ[45]:

Սաուդական թագավորական ընտանիքի կառավարող ամենաբարձր օղակներն, օգտվելով ստեղծված պատեհ առիթից, սկսեցին նախաձեռնել նոր թագաժառանգի ընտրությունը: Թագավոր Սալմանը երդմնակալության խորհրդին ուղարկեց նամակ, որտեղ առաջ քաշելով Մուհամմադ բին Նայեֆի հիվանդություններով տառապելու թեզը՝ առաջարկեց ազատել վերջինիս թագաժառանգի պաշտոնից և նրա փոխարեն թագաժառանգ նշանակել իր որդի Մուհամմադ բին Սալմանին[46]:

Իրադարձությունների ժամանակագրության ընտրությունը պատահական չէր: Բանն այն է, որ Ռամադան ամսվա վերջին Էյդ Ալ-Ֆիտր սրբազան տոնը նշելու նպատակով մեծ թվով արքայազններ նախքան արտասահման ճամփորդելը հավաքվում են Մեքքայում: Հետևաբար երդմնակալության խորհրդի նիստ գումարելը ավելի դյուրին էր վերջինիս անդամների համախմբման տեսանկյունից:

[45] كواليس ليلة "20 حزيران" وإطاحة بن سلمان بـ"ابن نايف" من ولاية العهد السعودي،Sputnik العربي، 19.07.2017، https://bit.ly/2vBm5t9

[46] تفاصيل انقلاب القصر في السعودية .. كيف تمت الإطاحة بولي العهد، رويترز، 19.11.2017، https://ara.reuters.com/article/topNews/idARAKBN1A4281

2017թ. հունիսին թագավորական հրամանագրով և երդմնակալության խորհրդի համաձայնությամբ Մուհամմադ բին Նայեֆը ազատվեց թագաժառանգի, ինչպես նաև ներքին գործերի նախարարի պաշտոնից, իսկ Մուհամմադ բին Սալմանը նշանակվեց Սաուդյան Արաբիայի թագաժառանգ[47]: Երդմնակալության մարմնի անդամներից միայն երեքն ընդդիմացան նրա ընտրությանը: Դրանք էին ներքին գործերի նախկին նախարար և Սալման թագավորի հարազատ եղբայր Ահմադ բին Աբդ Ալ-Ազիզը, Աբդալլահ թագավորի ընտանիքի ներկայացուցիչ Աբդ Ալ-Ազիզ բին Աբդալլահը և Ռիյադի նախկին փոխնահանգապետ արքայազն Մուհամմադ բին Սաադը[48]:

Որոշ աղբյուրների հավաստմամբ՝ Մուհամմադ բին Նայեֆը իշխանությունից հեռացվելուց հետո տնային կալանքի տակ է, հեռախոսազանգեր չի ստանում և նրան թույլատրվում է հանդիպել միայն ընտանիքի անդամների հետ[49]: Վերջինիս արգելվել է մասնակցել նույնիսկ իր հորեղբոր՝ Աբդ Ալ-Ռահմանի հուղարկավորության արարողությանը[50]:

Թագավորական հրամանագրով Սաուդյան Արաբիայի պատմության մեջ կրկին տեղի ունեցավ թագավորական իշխանության փոխանցման համակարգի և կառավարման հիմնական կանոնադրության 5-րդ դրույթի փոփոխություն, համաձայն որի՝ չեղյալ էր համարվում երդմնակալության խորհրդին վերաբերող հատվածը՝ սահմանելով, որ «Աբդ Ալ-Ազիզ թագավորի որդիներից հետո թագավորն ու թագաժառագը չէին

[47] أمر ملكي: الأمير محمد بن سلمان ولياً للعهد ونائباً لرئيس مجلس الوزراء، الموقع الرسمي لوزارة الإعلام، 2016.9.28، https://www.media.gov.sa/news/412

[48] عز الدين التميمي، محمد بن سلمان يمهّد طريقه للعرش بالاعتقالات... تدشين عهد الخوف؟، العربي الجديد، https://bit.ly/2HuN2qT 2017.9.16

[49] تفاصيل انقلاب القصر في السعودية .. كيف تمت الإطاحة بولي العهد، رويترز، 19.11.2017، https://ara.reuters.com/article/topNews/idARAKBN1A4281

[50] توترات داخل العائلة الحاكمة.. وقائد الحرس الوطني السعودي يحذر بن سلمان من التهور، وكالة وطن للأنباء، 26.07.2017، https://www.wattan.tv/ar/news/210070.html

կարող լինել Թագավորության հիմնադրի սերնդի միևնույն ճյուղից»[51]: Սա նշանակում էր, որ Մուհամմադ բին Սալմանի թագավոր դառնալու պարագայում վերջինս հնարավորություն չի ունենալու իշխանությունը փոխանցել իր հարազատ եղբայրներին կամ որդիներին, այլ պետք է ընտրի թագաժառանգ թագավորական ընտանիքի այլ ճյուղերի ներկայացուցիչներից: Սա մի կողմից նպատակ ուներ թագավորական ընտանիքի ներսում վստահության մթնոլորտ ստեղծել առ այն, որ ազդեցիկ իշխանական ճյուղը մտադիր չէր իշխանությունն ամբողջությամբ վերցնել իր ձեռքը, իսկ մյուս կողմից էլ ապագա թագավորին հնարավորություն էր տալիս թագավորական իշխանության բաշխման ընթացքում հենվել իրեն հավատարիմ խմբավորման վրա և վերջիններիցս առաջադրել գահի հավակնորդ՝ իր ազդեցությունը թագավորական ընտանիքում պահապանելու համար:

Թագավորական հրամանագրով փաստացի չեղյալ էր հայտարարվում նաև թագաժառանգի փոխանորդի ինստիտուտը, որը հատուկ ստեղծվել էր Աբդալլահ թագավորի ժառանգների իշխանությունն ամրապնդելու և վերջինիս ժառանգ, իշխանության ապագա հավակնորդ Մութաբ բին Աբդալլահին երկրի կառավարման ղեկը փոխանցելու համար, որին սուդեյրի իշխանական ճյուղից սերող Մուհամմադ բին Սալմանը հասել էր հենց դրա միջոցով:

Այսպիսով, Սաուդյան Արաբիայի թագավորական ընտանիքում Մուհամմադ բին Նայեֆին տապալելու և Մուհամմադ բին Սալմանի ազդեցության և իշխանության ամրապնդման համար մղվող պայքարում ականատես եղանք

[51] كيف سقط "أمير مكافحة الإرهاب" محمد بن نايف في صراع العروش؟، نون بوست، 21.11.2017، https://www.noonpost.com/content/18538

ներիշխանական թագավորական «սպիտակ հեղաշրջման» այս անգամ թագավորական նույն ճյուղից սերող ամենազդեցիկ ներկայացուցիչների միջև, որոնք ներկայացնում էին Աբդ Ալ-Ազիզ թագավորի երկրորդ սերնդին: Այն դրսևորվեց մրցակից կողմերից որևէ մեկի ազդեցությունը չեզոքացելու և քաղաքական ասպարեզից դուրս թողնելու, միջազգային հարթակում ի հաշիվ մյուս կողմի նոր խաղաքարտեր ու դաշնակիցներ ձեռք բերելու, թագավորական իշխանության փոխանցման համակարգում աննախադեպ փոփոխություններ իրականցնելու, տարածաշրջանային ծագող հակամարտությունները իշխանության բուրգի գագաթին հասնելուն ծառայեցնելու մեջ:

THE TRANSFORMATION OF THE ROYAL SAUDI FAMILY (2006-2017)

Summary

Ara Matevosyan
PhD Student, Department of Arabic Studies, YSU
E-mail: ara.matevosyan@ysumail.am

Keywords: *Royal Saudi family, Sudairis, inauguration council, Deputy Crown Prince, Mohammad Bin Salman.*

In the period (2006-2017), the Kingdom of Saudi Arabia was marked by the royal family's transformation which was initiated by King Abdallah. These processes were created due to modification struggles in the family which were aimed at reinforcing their own government circle at the expense of others. Confirming the new system of power (the inauguration council) and the post of the Deputy Crown Prince, King Abdallah guaranteed participation of all members of the royal family in the governance system by balancing and rearranging his forces by eventually leaving the throne to his candidate.

However, after the death of King Abdallah, the representatives of the more influential royal family (the Sudairis), came to power by reaching its

peak. They destroyed the innovations set up by their predecessors in the governance system of the Kingdom of Saudi Arabia and set up their own rules of the game. As a result a "White Royal Revolution" took place and due to that the era of Muhammad Bin Salman has begun.

ТРАНСФОРМАЦИЯ САУДОВСКОЙ КОРОЛЕВСКОЙ СЕМЬИ В 2006-2017 ГГ.

Резюме

Ара Матевосян
Аспирант кафедры Арабситики, ЕГУ
Эл. – почта: ara.matevosyan@ysumail.am

Ключевые слова: *саудовская королевская семья, Судейриты**,** наугурационный совет, заместитель наследного принца,*

В период 2006-2017 гг. Королевство Саудовская Аравия было отмечено трансформацией королевской семьи, которое было инициировано королем Абдаллхой. Эти процессы были рождены из-за изменений в семье, которые были направлены на укрепление своего круга власти за счет других. Подтвердив новую систему власти (инаугурационный совет) и должность заместителя наследного принца, король Абдаллах гарантировал участие всех членов королевской семьи в системе управления, уравновешивая и перестраивая свои силы, пытаясь оставить трон после его своему кандидату.

Однако после смерти короля Абдаллаха, представители более влиятельной королевской семьи (Судейриты), пришли к власти, достигнув ее вершины. Они уничтожили инновации, созданные их предшественниками в системе управления Королевства Саудовской Аравии, и установили свои правила игры. В результате произошел «белый дворцовый переворот», благодаря чему началась эра Мухаммада бин Салмана.